



Գործ թիվ ԵՂ2/26203/02/23

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Դ Ա Պ Ե Տ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին

25.08.2023թ.

ք. Երևան

ՀՀ Երևան քաղաքի առաջին աստիանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի /այսուհետ՝ Դատարան/ դատավոր Տ.Ստեփանյանս, ուսումնասիրելով «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայցադիմումին և դրան կից ներկայացված փաստաթղթերին,

Պ Ա Ր Ջ Ե Ց Ի

«Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն 18.08.2023թ. հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի առաջին աստիանի ընդհանուր իրավասության դատարան ընդդեմ ՀՀ պաշտպանության նախարարության՝ ՀՀ ՊՆ և «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի միջև 08.05.2023թ. կնքված «ՓՊՄԱՊՁԲ-23-7/29-3» ծածկագրով գնման պայմանագիրը ՊՆ-ի կողմից միակողմանի լուծելու 04.08.2023թ. որոշումն անվավեր ճանաչելու մասին:

23.08.2023թ. հայցադիմումը հանձնվել է Երևան քաղաքի առաջին աստիանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Տ. Ստեփանյանին:

Հայցադիմումը ներկայացվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված պահանջների պահպանմամբ և նույն օրենսգրքի 126-րդ և 127-րդ հոդվածներով նախատեսված՝ հայցադիմումի ընդունումը մերժելու կամ հայցադիմումը վերադարձնելու հիմքեր չկան:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 125-րդ, 199-րդ, 200-րդ հոդվածներով,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի ընդդեմ ՀՀ պաշտպանության նախարարության՝ ՀՀ ՊՆ և «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի միջև 08.05.2023թ. կնքված «ՓՊՄԱՊՁԲ-23-7/29-3» ծածկագրով գնման պայմանագիրը ՊՆ-ի կողմից միակողմանի լուծելու 04.08.2023թ. որոշումն անվավեր ճանաչելու մասին, հայցադիմումն ընդունել վարույթ:

Սույն դիմումը դատարանում ընդունված համարել սկզբնական ներկայացման օրը:

ԴԱՏԱՎՈՐ



S. ՍՏԵՓԱՆՅԱՆ